

տասնամյակում է, որ Թիւրքիան փաղ չունէ: Թիւրքիան կամեաւում է Լծործում 5 միլիոն ֆունտ ստերլինգի փոխառութիւն անել, ապահովելով այդ պարտքը Ապարտ կղզու եկամուտների ստիժումին հասանելի մասով, իսկ Միւրիան համաձայնութիւն չէ տալիս: Ապրիան կամեաւում է Փոքր Ասիայի պաշտօնականների մեծ մասը անգլիացիներից նշանակել, Թիւրքիան չէ համաձայնում:..

Գործերի գրութիւնը ահա այսպէս խառնված է:

ՆԵՐՐԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԱԽԱԼՑԻՍԻՍ

29-ին օգոստոսի

Ձեր պատուական լրագրի № 144 Արտոյցալից արձանագարեալ եղանակի երկու կետերի վերաբերութեամբ կամեաւում եմ ասել մի քանի խօսք: Նամակագրի խօսքերին հաւատ ընծայելով, այս տեղից շատ քիչ թղթակցութիւններ երևում են ազգային լրագրիներում, այստեղի երկտարարներին չէ հետաքրքրում: Եկեղեցի, թատրոն, դպրոց և սրանց նման կարևոր խնդիրներ: Երևի այդ նամակագիրը նոր մտնում է լրագրութեան անպարզի մէջ, ծանօթ չէ ինչպէս մեր կեանքին այնպէս և լրագրութեան, նախ քան իր թղթակցութիւնը եկեղեցական հայւանքի, երէց-փոխական խնդիրների, թատրոնական ընկերութեան և ներկայացուցիչների վերաբերութեամբ անհամար նամակագրութիւններ եղել են «Մը-շակի» մէջ: Այս վերջին տարում մի երկու պարտքեր իրանց անձնական գործերի ծանր զբաղմանց պատճառով, այս հեռացան լրագրիներին թղթակցելուց, բայց այդքան կարճ ժամանակի համար չէ կարելի ասել թէ Ախալցխայի մի գերեզմանատուն է, որից դուրս գալով միայն ինքն

ված մտեցնում է շատ մօտ աչքերին առարկան լաւ տեսնելու համար: Վատ տխրոյ ոչ սպիտակ թղթի վրա պատճառում է մի և նոյնը: Վատ տպւած բովանդակի կարգաւոր երկար երեկոյների և գիշերների միջոցում, երբ լուսաւորութիւնը շատ թույլ է, թէ և կարելի է, սրտի և մտքի համար բարեբար է, բայց փչացնել է շատ աչքեր կարողացողներին: Կարծատեսութիւնը ասում է հեղինակը, մեծ պակասութիւն է բառի ամբողջ նշանակութեամբ: Չը խօսելով նրա վրա, որ սկսվող և սատակացող կարծատեսութիւնը շատ անգամ կարող է սպառնալ տեսութեան կորուստով և ունենալ շատ ցաւալի հետեանքներ, չէ կարելի չը դարձնել ուշադրութիւն և այն ներգործութեան վրա, որ կարող է ունենալ սաստիկ կարծատեսութիւնը մարդու զարգացման վրա: Փիղիքական և բարոյական կողմից, կենցաղավարութեան մէջ կարծատեսութիւնը կարող է լինել շատ անախորժ բան: Կարծատեսը հանստիկ հանգամանքների և անձանթ հասարակութեան մէջ զգում է իրան շատ անյարմար չը տեսնելով տարդ կերպարանքը: չը պատուովների կանանց համար կարծատեսութիւնը ընտանեկան կեանքում ներկայացնում է առաւել ևս անյարմարութիւն: Նրանց համար շատ զգալի է անկարելիութիւնը հեշտ և շուտ նկատել բոլորը, որ չը անպատու է նրանց: Դառնաւ չէ նոյնպէս կարծատեսութիւնը վաճառականի, զինուորի, գիւղականի, փոխադրանքի, արխիտեկտորի, երկաթուղու և մովի վրա ծանալողների համար: Ինչ միջոցներ ունենք, ասում է պ. Բէյլը, կարծատեսութիւնը առաջ չը գալու և նրա բը-ժնկելու համար: Միջոցներ կարծատեսութեան առաջ չը գալու համար պէտք է սկսվեն հենց անգլիացի: Որովհետև կարծատեսութիւնը (զոնե ձգտումը դէպի նրան) ժառանգական է, որովհետև երբ ծնողներն կարծատես են, որդիքը շատ քիչ բացառութեամբ ազատվում են կարծա-

տեսութեան անիծում և պակասակում է միաներին: չէ որ ժողովուրդը դարձեալ նոյն է, նրա մէջ կան նոյն երկտարարները և նոյն ժողովրդական ազնիւ զգացումները և յատկութիւնները: Իսկ երգեցողութեան մասին նրա արած նկատմունքը բոլորովին անխառն է և միանգամայն այնտեղի: Երբ մի որ և ինչ անձ կամեաւում է նկատմունքը հրապարակ հանել, հարկաւոր է առանց անձնական կրքի առողջ գաղափարներ և բառ իրողութեան վերահասու լինելով, հիմնել իր նկատմունքը: Երգեցողութեան հարցը յիշալի շատ անգամ ուսուցչական ժողովների և արտաքին եղած ընկերութիւնների առարկան եղած է ոմանց կողմանէ, որոնց կարգիցն է, ինչպէս երևում է, նորաբայ նամակագիրը, որը իբրև արձագանք ուրիշների դուրս եկաւ այդ հարցով հրապարակ, երևի թղթակցի անունը ժառանգելու նպատակով: Եւ այժմ խօսելով երգեցողութեան այս խնդրի մասին, երբէք նպատակ չունենալ պաշտպանելու երգեցողութեան ուսուցչին և ոչ նամակագրի պատիւը չոչափուլ, այլ կամենում եմ բացատրել, թէ ինչ բանի մէջ է կայանում նրա անբաւականութիւնը: Երգեցողութեան մասին, Նամակագիրը չէ ուրանում, որ ուսուցիչը լաւ գիտէ իր արհեստը և պարագիւլ է խղճմանքով, որի պատճառով նա շատ անգամ սրբազան առաջնորդի, թեմական տեսչի, և ուրիշների կողմից չնորհալայութեան է արժանի եղել: Մի մարդ լաւ գիտէ իր արհեստը այն ժամանակ, երբ դրան վերաբերեալ բոլոր ճիշդերը և յատկութիւնները գիտէ և ըմբռնել է, ուրեմն չէ կարելի ասել թէ ձայների որոշելու ճաշակ չունի: Յիշալի ցաւն այն է, որ մեր երգեցողութիւնը համեմատում ենք եւրոպականի հետ և բոտ այն դատում ենք ուսուցչի արժանաւորութիւնը: Ի հարկէ, եթէ մեր եկեղեցական երգեցողութիւնը համեմատելու լինենք եւրոպականի հետ, որ բաժանված է խղճմանով ձայների, այն ժամանակ մեծ տարբերութիւններ կը գտնենք: Եթէ մեր մեր երգեցողութեան հմուտ և ճաշակ ունեցող անձի մօտ, որ երբէք եւրոպականի հետ ծանօթութիւն չունի և ականջը ուղղորդ չէ եւրոպականին, երբէք, նա այն ժամանակ տեսակ տեսակ տաճարութիւններ ցոյց կը տալ ասելով. «Ինչ գոռ գոռ ձայներ կը հանեն, ինչպէս կը բուռն» և ուրիշ շատ պակասութիւններ կը գտնի: Նա բոտ իր լըմաց, այսպէս և ընդհանրապէս, եւրոպականին տեղեկ կամ ծանօթ անձը լսելով մեր երգեցողութիւնը, կը նկարագրէ դանդաղ գոյներով, թիւ լըմի մէջ կերպին, կլլլցնի կա-

տեսութեանց, այն հանգամանքը չը պէտք է ուրեմն մոռանալ, երբ սաստիկ կարծատեսներն պակասում են սաստիկ նոյնպէս կարծատեսների վրա: Որովհետև կարծատեսութիւնը լինում է բնածին շատ անհաւ և սովորաբար սկսվում է առաջին տարիների հասակում, պէտք է ուրեմն հեռացնել մանուկները, մասնաւոր զորոնց ծնողները կարծատես են կամ կարծատես ընտանիքից, բոլոր այն վնասակար ներգործութիւններից, որոնք կարող են պատճառ լինել աչքի խնձորի երկարատևութիւն և այսպիսով կարծատեսութեանը: Արդէն Բեր (1817) արգելում էր այն վատ սովորութիւնը դպիսկների, որոնք երեխաների խաղալիքները բռնում են շատ մօտ նրանց աչքերի առաջ: Եւ իրաւ որ հարկաւոր է ուսման սկզբից ևս ուշադրութիւն դարձնել նրա վրա, որ մանուկները չը պարագիւլ երկար ժամերով մի քանի դիւլի հեռի աչքի առաջ բռնած առարկաներով: Բոլոր մանր խաղալիքները շատ, փոքր կը տարբերից զատկերներ հաւաքելը, շատ փոքր մանր բաների նկարներ և այլն պէտք է հեռացնել շատ վաղ գործածութիւնից: Դառն հարկաւոր է աչքերին հանգստութիւն տալ նայելով հեռի տեղերը և վարժեցնել աչքերն նկատելով հեռացած առարկաները: Երբ զբոսնում են մանուկները (որ չը պէտք է լինի կարճ ժամանակով) անշուշտ հարկաւոր է դարձնել նրանց ուշադրութիւնը և առաւել հեռի առարկաների վրա, որովհետև պարագիւլների ժամանակ և սենեակներում գտնվելով մանուկների տեսութեան հորիզոնը շատ սահմանափակված է, աչքերը երբէք չեն վարժվում հեռի տեղեր նայելով: Ուսումնարաններում հարկաւոր է զխաւարացի ուշք դարձնել լուսաւորութեան (освѣщеніе), սեղանների և աթոռների վրա, նոյնպէս որ պարագիւլները շուտ շուտ ընդմիջվեն: Մեղանից ամեն մէկը գիտէ իր անձնական փորձից, որ առաւել անորժ է հեշտ է պարագիւլ (մանաւանդ գրել), երբ

նեն, խեղդվածի ձայներ կը հանեն», որովհետև նրա ականջը ընտելացած լինելով կոկորդային և խորովին ձայների, միակ ձայնով երգեցողութիւնը չէ հաւանում: Ուստի մի եկեղեցու մէջ եղած երգեցողութիւնը համեմատելու համար պէտք է առնենք մեր ազգի եկեղեցու երգեցողութիւնը մեր երկու երեք եկեղեցիների մէջ և բոտ այն դատենք, թէ այստեղ լաւ է, կամ այնտեղ վատ, և ոչ թէ միայն տես եւրոպականին ծանօթ անձինք չեն հաւանում մեր եկեղեցու երգեցողութեան և թէ ուսուցիչը ընդունալ չէ ձայներ որոշելու: Մեղանից բոլոր երգեցողութիւնը մի ձայնով է երգվում, բայց պատարագի արարողութեան մի քանի կտորներից թէ և ոմանք աշխատեցան պատարագի ամբողջ երգեցողութիւնը քառեակ ձայնով բաժանված երգել, Վեհափառ Հայրապետը այդ խառն արգելեց մեր ազգային սեփական երգեցողութիւնը պահելու նպատակով, ուրեմն ինչ ձայների բաժանում և որոշում պահանջում է նամակագիրը:

Իսկ բաղաձայն տիրացունքի վերաբերութեամբ պէտք է ասել, որ շատ անգամ և միշտ լուր օրերում բաղաձայն երգել աշակերտները և միշտ ներկայ լինել չեն կարող, ուրեմն պէտք է առաջ գտն այն բաղաձայն հասակաւոր տիրացունքը, կամ թէ չէ պէտք է ժամերգութիւն չառնել լուր օրերում, եթէ ուսուցիչը այդպիսի բաղաձայններն ուշադրութիւն չը դարձնի և չը սովորեցնելով երեւմն ընկերութիւններով կամ միայնակ վարժութիւններ չանի, պէտք է պատճառ դառնայ եկեղեցիների փակման և միայն կիրակի օրերում բաւականութիւն տալ այդպիսի տրամադրեցին:

Պէտք է խոստովանել, որ սկզբում ես ևս խաբուսիւմ էի, այդ հարցի վերաբերութեամբ, բայց հետզհետեւ մտնելով հարցի մէջ եկայ իմ այդ համոզման, ուրեմն հարցը իմ կողմից կարծեմ բաւական բացատրված լինելով կը յայտնեն ուրախութիւնս լսելու շատերից այս մասին կարծիքներ, որպէս զի պարզ և որոշ պատկեր ստանալով վերանայ անտեղի տրամադրեցին:

ՆԱՄԱԿ ԱԽԱԼՑԻՍԻՍ

2 սեպտեմբերի

Ներկայ վերջացած պատերազմը ի միջի այլոց և մեր քաղաքին տուեց առևտրական զարկ, շատերը ուղղելին իրանց խանդավառ նիւթական

լոյսը ընկնում է ձախ կողմից և երբ մեր աչքերը փոքր ինչ ստուերի մէջ են: Մեր գրասենյակը դնում ենք այնպէս, որ լինի լուսամտի մօտ և որ սա դռնի մեր ձախ կողմից: Դա, որ շատ է պարագիւլ, մասնաւոր գրելով, չի նոտի երբէք ուղիղ լուսամտի հանդէպ, կամ շատ լոյս տուող լուսավալի, որի բոցը ծածկված չէ արժաւորով: Այսպիսի պայմաններում լոյսը շատ սաստիկ է մեղ համար, աչքերը չաւտով յոգնում են: Միայնից հետեւում է այն կանոնը, որ կարգաւոր, գրելու և այլ պարագիւլների ժամանակ մեր աչքերը չենթարկվին այնպիսի պայմաններին, որ աչքի ցանցաձև մաշկը (сѣтчатая оболочка) չը գրգռվի ոչ մի ալ սաստիկ լոյսով: Եւ այս է ահա պատճառը, որ բժիշկները խորհուրդ են տալիս ծածկել լուսավալի կամ մօմի բոցը արժաւորով: Վարագիւլները և հովա-նոցները լուսամտների առաւել ևս լաւ է, որ լինեն ոչ շատ մթնի մոխրագոյն չորից: Ինչ որ կը վերաբերի արհեստական լուսաւորութեանը, հարկաւոր է ասել, որ ոչ կերտիներ, ոչ զաղի լոյսը վնասակար չեն աչքերի համար, թէ և շատ անգամ լուում ենք, որ չը պէտք է դորձ անել կերտիներ լուսավալի լոյսը, այլ մոմերին: Մոմի, զաղի և կերտիներ լոյսը, համեմատելով օրական լոյսի հետ, զեղնագոյն կարծի է, աչքերին այնքան անորժ չէ, ինչպէս օրականը: Այս պատճառով հարկաւոր է, որ արհեստական լոյսը լինի առաւել անորժ և սպիտակ, որի համար կարելի է գործ դնել փոքր ինչ մաւաղոյն ապակիներ: Մեծ նշանակութիւն ունի ուսումնարաններում և լուսավալի կարգաւորելու հարցը: Եթէ լուսավալները կախված են սեղանների վրա շատ բարձր, շատ հեռի լուսաւորութիւնը, լուսաւորութիւնը կը լինի շատ թույլ: Գլխաւոր պայմանը նրանում է, որ աշակերտը նստած չը լինի այնպէս, որ լոյսը նրա գրքի և դասաթերթի վրա ընկնի միայն ալ կողմից: Առաւել ևս օգտակար է աշակերտի համար, երբ նա ստանում է լոյսը

զրուէիւնը, շատերը չըտարներէ փողատերէ դարձան, բայց այդ նիւթական ապահովութիւնը մինչև այժմ ոչինչ փոփոխութիւններ չառա-ջացրեց մեր կեանքի մէջ: Փոփոխութիւններ յայտնվեցան ոսկի և արծաթ քամարների, ժամացոյցների, զարդարված չորերի և այլ շուայ-լութիւնների մէջ, իսկ բարեգործական նպատակի համար դեռ ևս ոչինչ միջոցներ գործարած չեն: Միայնից երկու օր առաջ ուսուցչիներէ և հոգաբարձուներից կազմվեց մի ժողով որի խօսակցութեան նիւթը մեր երկսեռ ուսումնարանների անխախտման գրութիւնը բարեկեցութեամբ մի աղբրագիր ուղարկել Նորին Վեհափառութեան կաթողիկոսին, գաւառումս գտնված Ախալցխայի Ս. Փրկչի եկեղեցուն պատկանած գիւղերի կապալարամի — որը 11,000 բուրլու է հանում — մի մասը բաժին հանել տեղիս ուսումնարաններին: Արժանայիշատակ հանգուցեալ կարապետ արքեպիսկոպոսը այդ գիւղերի արդիւնքը թողել է յօգուտ կարնից կաթականներին: Չը նայելով որ գաղթականների մի նշանաւոր մասը — կէսից աւելի — բնակվում է մեր գաւառում, յիշեալ արդիւնքը ստացել է և ստանում է միայն Ախալցխայի Ս. Փրկչի եկեղեցին: Յայտնի է որ մեր քաղաքայիք ևս իբրև գաղթականներ ստանալու են այդ արդիւնքի եթէ ոչ կէսը գտնէ մի յայտնի մասը: Յուսով ենք որ Վեհափառ կաթողիկոսը ուշա-գրութիւն կը դարձնէ այդ հանգամանքի վրա և հարկաւոր աշակերտների կանոնաւոր ուսում մատակարարելու համար կաւելայնի մի զգալի միջոց: Վերջիշեալ ժողովի մէջ տեսուչ հայր Ս. Կէմիւրճօղլեանց առաջարկեց վերանորոգել մի տարի առաջ եղած օրիորդական ուսումնարանի բարեբարձիւնների տանական յուրի անդամա-վճարը և այդ առիթով ստորագրութիւն առա-ջարկեց որը մինչև այժմ 18 տիկիներից ստո-րագրված է և դեռ չարձանակվում է: Ժողովուրդի դէպի ուսումնարանը ունեցած անտարբերութեան պատճառներից միւրն են այն է, որ ուսումնարանի պրօգրաման անբաւականացուցիչ է, մեր ևս իր-գիտենք որ անբաւականացուցիչ է, Հասարա-կութիւնը տրտունջ է անում դրա վրա, բայց հարցը չը որ նրանցից մի գումար է նուրիւ նրա առաջընթացութեան համար: Ամենքն յայտնի է որ առանց փաղ ոչինչ չէ կարելի ձեռք բերել և միթէ ուսումնարանը բացառութիւն պէտք է կազմէ և գոյութիւն ունենայ միայն մի քանի անհատների նուիրաբուութիւններով: Մեր մէջ կարելի է որոգող ձրի ուսուցանել, կարելի է ուսուցիչներից, ուսումնարանի պրօգրամայից անբաւական լինել, բայց աշխատել բարեպեղ

միայն ձախ կողմից, ինչպէս օրական լուսաւորութեան ժամանակ: Արժաւորները և ինք-լեկտորները (рефлекторы) սեղանի վրա դը-ված կամ կախված լուսավալների համար դասա-տեսներում ամենից լաւ է, որ լինեն, ոչ թէ տա-փարակ, այլ կոնաձև (коническій) և պէտք է չինած լինեն ոչ թէ լոյսը չանցկացնող նիւթից, այլ կաթնագոյն ապակիից: Այսպիսով լոյսը անցնում է դէպի վերե և կողմերն, որով լուսաւորվում են ոչ թէ միայն սեղաններն, բայց և ամբողջ սենեակի տարածութիւնը: Սեղանների և նստարանների մասին ամենագլխաւորը պարունակվում է նորանում, որ աշակերտի աչքերի և գրքի կամ դասաթերթի մէջ տարածութիւնը լինի ոչ պակաս 14 դիւլմ և որ աթոռը բաւա-կան մօտ լինի սեղանին: Մի և նոյն կանոնը պէտք է կատարել և տան մէջ: Պարագիւլու ժամանակ մանուկները նստացնում են կամ մէջքով կամ ձախ կողմից դէպի լուսամտը: Երբ ևս նրանց մեծ գրքերը մեծ տառերով և նկարներով, որոնցով հեռացնում է գլխի շատ կռացնել և աչքերի աւելորդ յոգնելն: Բայց այս պայմաններում ևս հարկաւոր է սաստիկ ու-շադրութիւն դարձնել մանուկների սովորութեան վրա՝ բռնել առարկաներն շատ մօտ աչքերին և կռացնել գլուխը շատ ցած: Այս բոլորովին վը-նասակար սովորութիւնից պէտք է անշուշտ հե-ռացնել մանուկները:

Թողնելով պ. Բէյլի յօդուածից այն մասը, որտեղ նա խօսում է ակնոցների գործածելու և ընտրելու մասին և վերացնելով քաղաածը, ես թող եմ տալիս ինձ խորհուրդ տալ ծնողներին և դաստիարակչներին, երբ հարկաւորութիւն կայ ակնոցների դիմել միշտ մասնագէտ բժշկի գործակցութեամբ:

Բժիշկ Միրմանեանց
25 օգոստոսի Երբրում.

նրա դրութիւնը, Է՛... սո՛ւ հարկաւորն է: Սէրը
դէպի արձամարհեալ մեծաւոր (փողո) գերազան-
ցում է ընդհանուր օգտի և հասարակական շա-
հերի զգալի մասը: Նրանք չեն կարող ընտելա-
նալ փողերից բաժանվելու մտքի հետ: Բայց
կարծում եմ նրանք կուղղեն իրանց մինչև այժմ
ցոյց տուած անտարբերութիւնը: Այս օրերս կը
հաւաքվին քաղաքի հասկացող անձերից մի քա-
նիստ ուսումնարաններ կը բացուին միջոցների
մասին խորհրդակցելու համար: Մի պարտն որ
եռանդոտ կերպով աշխատում է հաւաքել այդ
փողովը, իր կողմից խոստանում է տալ 1000
րուբլ: Կենք կասկածում որ այդ պարտն (Ներ-
սէն Մարգարեանց) գովելի ընթացքին կը լինեն
հետեւողներ: Զնորհակալ ենք տեսուչ հայր Դե-
միտրիովանցից որը անխնայ կերպով աշխատում
է—ը նայելով արգելքների—առաջ տանել ու-
սումնարանական գործը: Հետեւողների մասին
խոստանում եմ գրել:

Խ. Մառանկովեանց

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Ալեքսանդրապոլ, 12 օգոստոսի

1875 թվին գնեցի իմ ազգականներից մի կա-
ռուած, նրանք կամեցան, որ ես ինձ վրա առ-
նեմ ուսումնարանի 5000 րուբլ գումարի պարտ-
քը, որ նրանց վրա չանվում էր արքունի տոկոսի
կրկնապատիկ քանակութեանը բարձր տոկոսով:
Ես նախապէս հարցրի հոգաբարձուներին յօժա-
րութիւնը, ե երբ նրանք հաճութիւն տուեցին,
ազգականներին պարտքն անցաւ ինձ վրա, և
որովհետեւ ժամանակամիջոցը լրանում էր նոյն
թիւ վերջին, ինքս վճարեցի հոգաբարձութեանը
մի հազար րուբլ կանխիկ և չորս հազար րուբ-
լու մուրհակագիր: Երբ 1876 թվականը և
վճարեցի պարտքիս չորս հազար րուբլ տոկոսը:
Այնուհետեւ, երբ հոգաբարձութիւնը միայն ինձա-
նից էր պահանջում այդ փողերը, ուրիշներին
զանցաւորութեան տալով, մեր մէջ պայմանագրու-
թիւն եղաւ, որ այդ չորս հազար րուբլու վրա
մի հազար րուբլի եւ բարդելով իւրաքանչիւր
տարվայ վերջին մի հազարական րուբլի վճա-
րեմ: Այս հիման վրա 1877 ամի վերջին հատուցի
մի հազար րուբլ հոգաբարձութեան նախագահ
արժանապատիւ Մարտիրոս քահանայ Տէր-Պօղոս
սեանցին, այժմ էլ պատրաստ եմ պայմանա-
գրեալ հազարականը իւրաքանչիւր տարվայ
վերջին վճարելու:

Գործի իսկութիւնն այս է. ուրեմն ո՞վ էլ որ
հոգաբարձու ընտրվի, չունի իրաւունք պայ-
մանագրեալ ծանուցարանից դուրս ինձանից վճա-
րումն պահանջելու, ինչպէս կարծում են ուրիշ-
ները, իսկ հակառակ դէպքում, ես խոյս տալու
չեմ բոլոր միանուագ վճարելուց և այն
ոչ թէ հոգաբարձուներից պտուկաւելով կամ թէ
ինձ պարտաւոր զգալով, այլ միայն դպրոցի
ստիպողական կարիքն աչքի առաջ ունենալով,
կամ թէ համոզված լինելով, որ եթէ գումարն
ինձանից դուրս գալու լինի՝ ուրիշի ձեռքում
աւելի մեծ չափ պիտի բերէ դպրոցին: Սակայն
ես շատ կասկածում եմ, որ կըրն անձնատուր
եղած հոգաբարձուներից մի քանիսի տաքնա-
պելը ուսումնարանի շահերի համար լինէր, ընդ-
հակառակն ես դեռ համոզված եմ, որ դպրոցի
մեծամեծ շահերը հոգաբարձութեան շնորհիւ
միտադամայն զոհ են եղած մի քանիսի անձնա-
կան շահերին, և զարմանում եմ, որ փոխանակ
ամաչելու և խղճահարկելու, այդ անձնաշահ
անձինք ձգտում են սուտ լուրերով արատաւո-
րել այն անձանց անունը, որոնք չեն կա-
մենում ծառայել նոցա անձական շահերին:
Ես ինքս ուսումնարանի կրպակ նստող չեմ,
ոչ էլ վաճառական մարդ եմ այդ ֆեասակար-
ների նման, որ համախոհ լինեմ նրանց և իմ
գրպանիս օգուտներին համար ուսումնարանները
զրկեմ տաւոր հազարաւոր րուբլների եկամուտ-
ներից, ինչպէս ձգտում և անում են այդ մեր
դպրոցների կրպակները նստող և հոգաբարձուի
պաշտօն վարող մանրավաճառ պարտնները: Ես
ինքս ուսումնարանի վարժապետութեան կամ մի
այլ պաշտօնի վրա աչք չունեմ, ոչ էլ համարձա-
կում եմ ինձ ուսումնական ձեռքներու այդ խմբի
մի քանի անձանցի նման, որ ոչ մի պատուի
նշան չը տեսած՝ այլոց պատիւը ոտնակոխ անե-
լով մի քանի հոգաբարձու անձանց կակուղ դա-
մարը փնտրեմ և իմ տարեկան ռոճիկներս հնար-
քներով աւելացնել տամ, կամ թէ պանդոկներն
ու գինեւանոցները ման գալով ամեն պա-
տուաւոր և երախտաւոր կամ գործին անկեղծու-
թեամբ հետևող մարդկանց վրա պարզամիտ ժո-

ղովորդի մէջ վատթար ու թիւր կարծիքներ տա-
րածելով ինձ և իմ համախոհների համար պատ-
գամաւորութեան կամ հոգաբարձութեան ծանա-
պարհ բանամ: Ես ինքս վերջապէս դեպուտա-
տական իշխանութեանը մի մերձաւոր անձն չեմ
և ոչ էլ իմ հարստութեամբ հասարակութեան
վրա ազդեցութիւն ունեցող, որ փոխանակ հա-
մոզելու՝ բռնանամ հակառակորդիս վրա և իմ
խօսքս առաջ տանելու համար սպառնալիքներ
գործ դնեմ, դեռեւտնիկների ձեռքով թղթեր
ստորագրել տամ, փողովի մէջ քմացս հակառակ
հայր բարձրացնողին բռնի արտաքսել տամ և
իմ հաւանած ընտրողական թերթին չը ստորա-
գրողներին առաջ եկեղեցու դռները փակել տամ,
ինչպէս որ արեւ են այս վերջի ընտրութիւնների
ժամանակ մեր առաջաւորներից մի քանիսը: Ես
այդպիսիներից չեմ և ինձ համար շատ և շատ
թանգ են նախ այն հասարակութեան իսկական
շահերը, որին իբրեւ մի համեստ անդամ և քաղա-
քացի պատրաստ եմ եղել միշտ, ինչպէս և իմ
արժանաշիշտակ նախնիքը անկեղծութեամբ և
անչախնդիր հոգով ծառայելու և երկրորդ իմ
անձնական պատիւը, որ կապուած է իմ տոհմիս
պատուի հետ և վստահութիւն է տալիս ինձ չը
թողնել հազկատակներին հասարակական առ-
պարէզը պղծելու ի ժամու և ի տարածմուն
ոտնհար անելով մի որ և ինչ հասարակաշահ
անձի, իրանց գործերը ամբողջ աչքի առաջ
վարադուրելու դիտմամբ: Իմ ուզածս ամենից
առաջ ձգտարութիւնն ու արդարութիւնն է
եղել, ուստի և ոչ մի նշանակութիւն չեմ տալիս
զրպարտիչ խօսքերին, ինչպէս և շատ անգամ
լուրթեամբ անցած եմ, այսքանն էլ գրեցի միա-
միտների զգուշութեան համար:

Մի բան միայն իմ կողմանէ հարկաւոր կը դա-
տեմ աւելացնել, որ եթէ այլոց անունը արատա-
ւորել ձգտող հոգաբարձուներից ոմանք և նրանց
համախոհները իրաւի ուսումնարանի շահերի հա-
մար են տաքնապուծ և ունին գէթ նշող մի մարդ-
կային պատուասիրութեան, թող առաջ իրանք
օրինակ տան և զուրս գալով իրանց կրպակնե-
րից՝ չը կապեն աւելի առատ վարձ տուողների
առաջը և վճարեն իրանցից դպրոցին հասանելի
անցեալ երկու տարիների մեծագումար իսկաւ-
կան վարձը, որ պարտաւոր էին կանխիկ վճա-
րելու, բայց մինչև հիմայ վճարած չեն, այն ժա-
մանակ ես էլ պատրաստ եմ ինձանից դպրոցին
հասանելի գումարը միանուագ վճարելու: Քանի
որ նրանք այդ չեն անում և զբաղուած ուղղակի
և անուղղակի փնտրեն են հասցնում դպրոցին, ես
որ օրինաւոր մուրհակագրով և տոկոսով շահեց-
նում եմ դպրոցի գումարը, ամեն ժամանակ իրա-
ւունք ունեմ ուշք չը դարձնելու նրանց անար-
դար պահանջների վրա: Թող որ իբրեւ հասարա-
կութեան անդամ միշտ էլ իրաւունք ունեմ բո-
ղոքելու այն ֆեասաների մասին որ հասել են մեր
երկսեռ դպրոցներին ոչ թէ մեր քաղաքացոյց ան-
տարբերութեան կամ տգիտութեան պատճառով,
որ միտադամայն զրպարտութիւն է, այլ մի երկու
խարդախ հոգաբարձուների և նրանց ընկերացած
դատարկապարտ երիտասարդների շահասիրու-
թեան և չարասրտութեան շնորհիւ, մասնաւոր
այնպիսիների, որոնք առանց այն էլ մեր միա-
միտ և բարեխիտ հասարակութեան մէջ միշտ
խռովարար և երկպառակող են եղել և ոչ մի
բարեմիտ անձի համակրութիւն վայելած չեն
մինչև այսօր:

Արշակ Տիրաւեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Այսօրվայ տօնի պատճառով «Մշակի» էզուց-
վայ համարը չենք հրատարակել, այլ մեր
թերթի հետեւեալ համարը կը հրատարակենք
երեքշաբթի օրը:

ՇՈՒՇՈՒ հոգեւոր դպրոցի երրորդ դաստառն
մի խնջող աշակերտ կամենում է չարուհակ ու-
սումը, բայց միջոցներ չունի: Երկուստարդը
որոշում է մի ազգասէր անձի, որ նրա ուսման
համար հարկաւոր եղած ծախսը յանձն առնէր:
Երկուստարդը ինչպիսի է մեզ այդ անասին յայտ-
նել: Զանկացող բարերարը իր հասցէն «Մշակի»
խմբագրատան մէջ պէտք է թողնէ:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՆ

ԹԻՒՐԻՍ

«Polit. Corresp.» լրագրին դրում են Կ.
Պօլսից հետեւեալը:
«Ձեր թղթակիցը մի քանի օր առաջ մի-

ջոց ունեցաւ թիւրքաց մեծ վիզիր Սաֆֆէտ-
փաշայի հետ տեսակցութիւն ունենալու:
Սաֆֆէտ-փաշայի խօսքերի համեմատ բօս-
նիացիների և հնդկացիների ընդդիմա-
թիւնը աւստրիական զորքերին մեծ ցաւ է
պատճառում Բ. Դրանը և թիւրքաց կառա-
վարութեանը չէ կարելի մեղադրել, որ նա չը
զսպեց ապստամբութիւնը, որովհետեւ նա մի
քանի ժամանակից կորցրել է իր բոլոր հեղի-
նակութիւնը և իշխանութիւնը Բօսնիայում և
Հերցեգովինայում: ՄԾ վիզիր Սաֆֆէտ-փաշա
ասել է, որ Բ. Դուռը տուել է իրանից կախ-
ված բոլոր հրամանները որպէս զե յիշեալ
նահանգներում չընդդիմանան աւստրիական
զորքերին, բայց տարաբաղդաբար չէ կարո-
ղացել բաւական զօրք ուղարկել, որ իր հրա-
մանները անպատճառ կատարվեն, որովհետեւ
թիւրքաց կառավարութիւնը չէր կարող փո-
քարացնել Կ. Պօլսում, Եպիրոսում, Մակեդո-
նիայում և Փնալիայում եղած զօրքերի
թիւը: Թիւրքաց կայսերական կառավարու-
թիւնը, նկատել է Սաֆֆէտ-փաշա, Աւստ-
րիայի և Թիւրքիայի մէջ եղած բարեկամա-
կան յարաբերութիւններին մեծ նշանակու-
թիւն է տալիս և կը ցանկանայ, որ սահ-
մանակից նահանգի մէջ պատահած անցքերը
առիթ է տային, որ երկու պետութիւն-
ների մէջ անհամաձայնութիւն ծագէր:

Բ. Դրանը և Լայպրզի մէջ եղած բանակ-
ցութիւնները Փոքր-Ասիայի մէջ մոցնելու վե-
րանորոգութիւնների մասին շատ դանդաղ
կերպով են առաջ գնում: Թիւրքերը անհան-
գիստ են Անգլիայի ցանկութեանց բոլոր պաշ-
տօնեաների տեղերը անգլիացիներին տալ: Բ.
Դուռը կարծում է, որ այդպիսի օտար տարրի
մոցնելը վատ տպաւորութիւն կունենայ տե-
ղական ազգաբնակչութեան վրա և կարգելէ
վերանորոգութիւնների աշնորութեանը Սաֆ-
ֆէտ-փաշա Լայպրզի բոլոր առաջարկու-
թիւններին մի պատասխան է տալիս՝ «մենք
փող չունենք, ասում է նա, մեզ կամ փող
տուէք կամ միջոց, որ կարողանանք անհրա-
ժեշտ գումարը ձեռք բերել»:
«Օնդոնում» արգէն բանակցութիւններ են
սկսվել 5 միլիոն ֆունտ ստերլինգի փոխա-
ռութեան մասին, որ կապահովվի այն գու-
մարով, որ Անգլիան պէտք է վճարէ սուլ-
թանին Կիպրոս կղզու եկամուտներից: Եթէ
այդ փոխառութիւնը աջողվի, նրա մի մասը
պէտք է Ռուսաստանին վճարվի, որ վարձա-
տրութիւն է պահանջում 67,000 թիւրք
գերիներ պահելու համար:

«Ձերնօգրիայի» իշխանի համբերութիւնը
վերջապէս հաստաւ և նա ուղղակի դիմեց Սաֆ-
ֆէտ-փաշային, պահանջելով դատարիւլ այն
երկրները, որոնց կօդերէս Ձերնօգրիային
է յատկացրել Մեծ վիզիրը պատասխանեց, որ
նա արգէն յանձնել է Մահմեդ-Ալի-փաշային
ուղեւորվել այդ երկրները և Ձերնօգրիայի
գործակալի հետ որոշել սահմանները:

«Ռուսումն» մի անցք պատահեց Վոլոյում
Մի ամերիկացի տիկին կամեցել է Ժողովուր-
դին մի քանի ինքնուրույն թարգմանված առ-
տուածաշունչներ ընծայել: Տեղական յոյները,
թիւրքերը, հայերը և բոլորները հաւաք-
վել են և սկսել են տիկնոջը քարկործել: Տիկ-
նոջ զանգատի համեմատ այստեղի ամերիկա-
կան դեսպանը ուղարկել է իր հաւատարմա-
տարին, որ նա պահանջէ պատժել մեղաւոր-
ներին: Կայմակամը հրամայել է բանտարկել
բոլոր մեղաւորներին հաւատարմատարի ներ-
կայութեամբ, բայց հէնց որ նա հեռացել
է, բոլորին էլ արձակել է: Այս եղելութեան
դեսպանը մի ղեկուորական նաւ է ուղարկել
Վոլոյ Ցայտնի չէ գործը ինչպէս կը վերջա-
նայ»:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

— «Վոլֆի» հեռագրական ընկերութիւնը՝ ու-
ղարկել է Բերլինի րազդիրներին հեռագիր Ս. Պե-
տերբուրգից, որ հերքում է Լօնդօնի րազդի-
րների հաղորդած լուրը, իբր թէ Ռուսաստանը
մտադիր է կրկնապատկել այն զօրքերի թիւը,
որոնք Բերլինի կօդերէսի վճռի համեմատ պէտք
է մնան թիւրքայում:

— Վիէնայից՝ րազդիրներին հաղորդում են,
որ Սուլէյման-փաշան սպառնաց Տրէբիւնէի
բնակիչներին ուժակոծել քաղաքը, եթէ քա-
ղաքի ապստամբները զենքը չը յանձնեն իշխա-
նութեանը: Այս սպառնալիքը ազդեց ապս-
տամբների վրա, նոքա զցեցին՝ զենքը և միւս
օրը աւստրիական զօրքերը գրաւեցին քաղաքը:

— Բէլգրադից րազդիրներին հաղորդում են, որ
Վեսնոփաջ հասան 20,000 աւստրիական օգ-
նական զօրքեր: Ապստամբները մեծ բազմու-
թեամբ կենտրոնացնում են Բանիալոկայում:

— Վիէնայից (Բէլյուրի ընկերութեան) հա-
ղորդում են, որ աւստրիական զօրքերը Բօս-
նիայում դադարեցրել են պատերազմական գոր-
ծողութիւնները ապստամբների դէմ մինչև հե-
տեալ չաբաթը: Այդ ժամանակամիջոցում կը
հասնեն օգնական զօրքեր: Աւստրիացիներից
գրաւված երկրում քաղաքային հիմնարկութիւն-
ների, փոստի և հեռագրատան կազմակերպելը
վերջացրած է: Ճանապարհները չինած են և
հունձը հաւաքելու համար առանձին կանոն-
ներ են հրատարակված: Հունձի տասնորդա-
կան մասը պէտք է զօրքերին տրվի:

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

«Correspondencia de Espana» լրագրում առ-
ված է, որ խրիստիան թագուհին որ իրանից
յետոյ ութ միլիոն ֆրանկ կարողութիւն թողեց,
իբրեւ ժառանգութիւն կընկնի միայն Բիան-
սերէս դքսից ունեցած երեխաներին, որովհետեւ
խրիստիան թագուհին վաղուց է որ իր անդրա-
նիկ աղջկանց՝ Իզաբելլա թագուհուն և Մօն-
մանսիէ դքսուհուն տուեց ինչ որ հասնելու էր
նրանց իր մահից յետոյ:

Սեպտեմբերի 2-ին Դիւխսուրգ քաղաքում
(Պրուսիայում) պէտք է Գերարդ Կրէմլեր ար-
ձանը կանգնել, որը հռչակված է Մեծ Կատօրի
անունով և որը իր աշխատանքներով մեծ ծա-
ռայութիւններ է մատուցել նաւազնացութեան
և ծովային աշխարհագրութեան: Կրէմլեր ծնվե-
ցաւ 1612 թվին գերմանացի ծնողներից բնի-
զիական Բիւպլեմսի փողոցի քաղաքում: 1652
թվից նա Դիւխսուրգում էր բնակվում, որտեղ
և վախճանվեցաւ 1694 թվ: զեկեմբերի 2-ին:

Կ. Պօլսի «Turquie» լրագիրը ասում է որ
թիւրքաց տէրութիւնը զբաղված է այժմ Հայաս-
տանի մէջ մոցնելու վերանորոգութիւնների
պրօէկտով: Վերանորոգութիւնները վերաբեր-
վում են գլխաւորապէս չորս կետերին: 1) պէտք
է կազմակերպվի ժամադարմութիւնը: 2) տա-
սանորդի տուրքը պէտք է փոխարինվի հողային
տուրքով: 3) իւրաքանչիւր վիլայէթում պէտք է
հիմնվի մի ֆինանսական վարչութիւն և 4) զա-
տարանները պէտք է վերանորոգվեն այնպէս, որ
անկախ լինեն վարչութիւնից:

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՆԻՑ

ԵԱՍՍ, 5 սեպտեմբերի: Սե ծով նաւա-
տորմի գլխաւոր հրամանատարը այսօր վե-
րադարձաւ այստեղ Բաթումից: Ասում են որ
նա իր ճանապարհորդութեանց ամենամիջի-
թարական տպաւորութիւն է դուրս բերել: Նա
համարում է Բաթում մի թանկագին ստա-
ցուածք Ռուսաստանի համար:

ՕԴԷՍՍ, 6 սեպտեմբերի: Նրէկ հասան այս-
տեղ «Ռուսաստան» և «Նիժնի-Նովոգորոդ»
կրէյսերները, առաջինը զօրքերով Սան-Սաե-
ֆանօից, իսկ երկրորդը Անգլիայից կամաւոր
նաւատորմի համար նշանակված քարածու-
կով բեռնաւորված:
